ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը յուլիս 11-ին կրկին մի անգամ ուղևորութիւն յանձն առաւ դէպի Սևանի վանքը, Երևանի վրայով, ուղեկցութեամբ Բարձր. Գարեգին վարդապետ Սաթունեանի։ Այստեղ Նորին Վեհափառութեան շքախմբին միացաւ Երևանի Թեմ. Փոխանորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոսն, որ Նոր Բայազետ էր ուղևորուել քահանաների և ժողովրդականների մէջ ծագած ինչ ինչ անբաւականութեանց վերջ տալու համար, և ուղեկցեց Վեհափառ Հայրապետին մինչև Հաղարծնի վանքը և վերադարձին։ Մայր Աթոռ վերադարձաւ Նորին Սրբութիւնը յուլիս 20-ին։ Ապա 24-ին Բիւրականի ամառանոցը գնաց մի քանի օր ազատ մնալու համար ս. Էջմիածնի տօթերից։ Իսկ օգոստոս 8-ին Նորին Վեհափառութիւնն ուղեկից ունենալով Գեր. Ներսէս արքեպիսկոպոսին և Բարձր. Գարեգին վարդապետ Սաթունեանին և Դիւանապետ Տ. Կորիւն վարդապետին մեկնեցաւ ձիով դէպի Հառիճի վանքը։—Ախալցխայի փոխանորդ Արժ. Պետրոս և Աղէքսանդրապոլի փոխանորդ Արժ. Մխիթար վարդապետներին հեռագրուեցաւ, որ շտապեն Հառիճ երթալ՝ Նորին Ս. Օծութեան ներկայանալու։

Վեհափառ Հայրապետի սրբ. Կոնդակով Ճողակաթի վանքի վանահայր նշանակուեցաւ Արժ. Սահակ վարդապետ Ամատունի. Գօրւոյ Փոխանորդ կարգուեցաւ և ծաղկեայ սև փիլոնով պարգևատրուեցաւ Արժ. Իսահակ վարդապետ Տէր Միքայէլեան. Ճառընեաց վանքի վանահայր կարգուեցաւ Բարեշնորհ Եփրեմ աբեղայ Ազանեանց և Խոր վիրապի վանքի վանահայր՝ Բարեշն. Թադէոս աբեղայ։ Վարդապետական սպանակուռ խաչ ստացաւ Արժ. Արսէն վարդ. Ղլտճեանց, որ նշանակուած է առ ժամանակ Վաղարշապատ գիւղից վանքին հասանելիք կալուածքները ժողովելու գործին վերահսկող և ամենայն աչալրջութեամբ կատարում է այդ պաշտօնը։

Սինոդի անդամ Բարձր. Յուսիկ վարդապետ վերադարձաւ Արտաթուամնից և փոխարէն օգոստոս 5-ին դէպի Տփխիս մեկնեցաւ հանքային ջրերով ապաքինելու նոյն Սինոդի անդամ Գեր. Եսայի արքեպիսկոպոս։

Յուլիս 19-ին Մայր Աթոռ հիւր եկաւ Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի արևելեան բաժնի ուսուցչապետ պ. Մառ և զբաղուում է ձեռագիրների մատենադարանում։ Պ. Մառ համեմատում և հետազօտում է մի քանի սրբոց վկայաբանութիւնները, որոնց վրացերէն թարգմանութիւնների հայերէնից փոխադրուած լինելը պէտք է ապացուցանէ։ Մեծարգոյ ուսուցչապետը մտադիր է ամսոյս 16-ին երթալ մի քանի օրով պեղումներ անելու այն բլուրի վերայ, ուր պէտք է ենթադրել թէ գտնուում էր հին Դուինի մայրաքաղաքը։ Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ առաջիկայ սեպտեմբեր ամսից Պետերբուրգ պէտք է փոխադրուի և պ. Մառի հսկողութեան ներքոյ շարունակէ իւր ուսումը Ճնորհ. Սմբատ սարկաւագ։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Առաջիկայ ուսումնական տարուանից սկսած Ճեմարանը պէտք է ունենայ կրկին Ա. և Բ. դասատուններ, որ պէտք է կազմեն անցեալ տարուայ վարժոցի Դ. և Ե. բաժանմունքները։ Վարժոց ուրեմն Ճեմարանն այսուհետև չի ունենայ և նորա ամենաստորին դասարանը կլինի Առաջինը, նախկին ծխական դպրոցների Ե. բաժանմուն կամ մեր Թեմական դպրանոցների Բ. դասատուն ծրագրով։ Ուսանողների վարժոցում ունեցած պարապմունքների բարձուելով ի միջի այլոց հնարաւորութիւն է լինում մի նոր շատ կարևոր առարկայ մտցնել լսարաններում՝ Եկեղ. իրաւագիտութիւն, որի համար ուսուցիչ հրաւիրուած է արդէն Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնի նորաւարտ կանդիդատ պ. Սիրական Տիգրանեան։

Ճեմարանը ներկայումս ունի արդէն իւր

արդի պայմաններին համապատասխան թուով որդեգիրներ, ուսումի սակաւութի. նորերին միայն ընդունիլ կարող է և խիստ ընտրութեամբ: Թէ՛ նորերի և թէ՛ վերաքննելի աշակերտների քննութիւնները կսկսուեն սեպտ. 1-ից:

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Ս. Երուսաղէմի լուսարարապետ Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոս որ Ս. Յակոբայ վանուց մատենադարանի ձեռագիրներուն քննական ընդհանուր ցուցակը պատրաստելու ձեռնարկած էր, 3000-ի մօտ գրչագիրներէն՝ 320 օրինակ ձեռագիրներու ուսումնասիրութիւններն աւարտեր է՝ մէկ տարուան միջոցին: Կը հաւատանք թէ այն գրական աշխատասիրութիւնը բաւական ստուարահատոր գործ մըն է, և Խապայեան Սրբազանի ցարդ հրատարակած երկասիրութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէ.

— Պատրիարքական Փոխանորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեան՝ ընկերակցութեամբ Ա. գործակատար Տիգրան էֆ. Տ. Ներսէսեանի՝ այցելութիւն տալով Կաթողիկէ—Ասորիներու նորընտիր Տ. Էփրէմ Պատրիարքին որ Պէրութէն մայրաքաղաքս եկած է, բարի գալուստ մաղթեց յանուն մեր Ս. Պատրիարք Հօր.

— Ակնէն կը գրեն 23 թուականով. «Արաբկիրի առաջն. տեղապահ Տ. Մուշեղ Ծ. վարդապետ ամսոյս 11-ին քաղաքս հասաւ. իր հետ ունենալով Արաբկիրի քահանաներէն Տ. Վաղարշակ Հայրը. Յաջորդ օրն իսկ սկսաւ շուկային մէջ հանգանակութիւն կատարել, բացուելիք Որբանոցին նախապատրաստութեանց համար. Հանգանակութիւնը շարունակուեցաւ թաղէ թաղ և գիւղէ գիւղ, միշտ ընկերակցութեամբ Մուշեղ Հայրսուրբին: Ակնայ քաղաքէն, Ապուշէխէն, Կամրկապէն և Կարուչլայէն եղած հանգանակութեան արդիւնքը 5500 ղրշ.-ի բարձրացաւ, ու քաղաքացի կիներ բարեսիրաբար եկան տղու անկողինները պատրաստելու. Որբանոցը որ պիտի մատակարարուի Արմաւիրաբնակ Թորոսեան պատուական եղբայրներուն ծախքով, հանդիսաւորապէս բացուեցաւ մայիս 23-ին. Առաջնորդ տեղապահը որ Կարուշլա կը գտնուէր մինչ, առաւօտուն քաղաք դարձաւ. Որբանոցի բացման հանդէսը սկսաւ ժամ 5-ին, հինգ քահանաներու, պաշտօնական մարմիններու և ժողովրդեան բազմութեան մը ներկայութեամբ. Բողոքական որբանոցներու տեսուչ մարմինները և մօտակայ գիւղերու Թաղ. Խորհուրդներն ալ ունէին իրենց ներկայացուցիչները, որոնք մասնաւոր հրաւէրով եկած էին պատուել Որբանոցի բացման հանդէսը. Կրօնական արարողութիւններէն ետք, Տ. Մուշեղ Ծ. վարդապետ խօսեցաւ հանդէսին առթիւ, շնորհակալութիւն յայտնեց Թորոսեան հարազատներուն հեռուէն կատարած այս բարեգործութեանը համար, յորդորեց ժողովուրդը նպաստել այս մարդասիրական ձեռնարկին, օրհնեց որբերը և Պահպանիչ ըսաւ անոնց վրայ: Ի վերջոյ, Բինկեանի Տ. Վարդան քահանայ Արսլանեանը խօսք առնելով՝ յանուն Որբանոցի Խնամակալութեան և Ակնայ ժողովրդեան, շնորհակալութիւն յայտնեց Տ. Մուշեղ վարդապետին՝ Ակնայ վիճակին վրայ իր ունեցած հոգածութեանը ու խնամքին համար.

Ակնայ Որբանոցը առ այժմ պիտի ունենայ 31 որբեր, որոնց 25-ը ներկայ էին Որբանոցի բացման ատեն. Այս որբերէն 19-ը ընդունուած են քաղաքէն, մէկը Վաղշէնէն, մէկը Քուշնայէն, 3-ը Կամրկապէն, մէկը Ապուշէխէն, 2-ը Զարագ գիւղէն, 1-ը Բինկեանէն, մէկը Նաւրիրէն և 2-ը Լիճքէն. Որբանոցին հոգաբարձութիւնը կը կազմեն՝ Տ. Մուշեղ քահանայ Տէր Պօղոսեան, Առաքել էֆ. Սիրունեան, Աստուր էֆ. Սարրեան. Մարտիրոս էֆ. Սէմէրճեան, Մելքոն էֆ. Խասկէլեան.

— Ամերիկայի հոգևոր հովիւ Տ. Յովսէփ եպիսկոպոս Սարաճեան Ուսթըրի ազգայիններուն մէջ հանգանակութիւն մը ընելով 120 ոսկի հաւաքած և ղրկած է Պատրիարքարան, գաւառացի կարօտեալներուն ի նպաստ.

— Նոյնպէս Արգուինէն 23 ոսկի ղրկուած է Պատրիարքարան, գաւառացի կարօտեալներուն համար.

—Տիվրիկի Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքի նորոգութեան անհրաժեշտ պէտքը ծանուցանելով Պատրիարքարան, յայտնուած է որ եթէ անմիջական կերպով նորոգութիւնը կատարուի, 100 ոսկիի գումար մը պիտի բաւէ. իսկ եթէ յետաձգուի, յառաջիկային քանի մը հարիւր ոսկի անբաւական պիտի ըլլայ. Տիվրիկի կալուածոց հոգաբարձութեան յանձնուած է խնդիրը:

— Եւրոպայի հայ գաղթականութեանց հոգևոր հովիւ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեան որ Բարիզէն Մանչեսթըր գացած էր քանի մը շաբաթ առաջ, այս օրերս Լոնտոն պիտի ուղևորի՝ այնտեղի հայ գաղթականութիւնն ալ հովուելու և եկեղեցական արարողութիւն կատարելու համար. Մանչեսթրաբնակ ազգայինները յարգալիր ընդունելութիւն մը ըրեր են այցելու Սրբազանին.

— Սըվազի Զուիցերիական Որբանոցին սաները յայտնելով թէ ձեւակերպութեան համար միայն շաբաթը անգամ մը եկեղեցի կը տարուին